Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	«Խաղ ճանապարհորդությունը, որպես դասի արդյունավետության բարձրացման միջոց, «Արգիշտի 1-ինի» դասը ուսումնասիրելիս»:
Ուսուցչի տվյալներ • Ա. Ա. Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Ժաննա Պողոսյան Վանիկի Մանկավարժ, պատմության ուսուցչուհի Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն 6-12-րդ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Պտղնիի միջնակարգ դպրոց 2փ., 2տ. ptgni@schools.am

Բովանդակություն

1. **Ներածություն** **էջ 3-4**
2. **Պարագրաֆներ/մասեր** **էջ 5-17**
3. **Եզրակացություններ, առաջարկություններ** **էջ 18**
4. **Օգտագործված գրականության ցանկ** **էջ 19**
5. **Հավելվածներ** **էջ 20**

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	«Որքանով արդյունավետ կլինի «Խաղ ճանապարհորդությունը, որպես դասի արդյունավետության բարձրացման միջոց, «Արգիշտի 1-ինի» դասը ուսումնասիրելիս»»: «Խաղ ճանապարհորդություն» մեթոդը ուսուցում է երևակայական մտապատկերների միջոցով, որի արդյունքում աշակերտը մտովի տեղափոխվում է պատմական կոնկրետ ժամանակաշրջան և ստանձնում է կոնկրետ դերակատարում: Սա մի ռազմավարություն է, որը հենվում է աշակերտների ակտիվ երևակայության վրա: Երեխաները սիրում են երազել: ՈՒստի այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ դերային խաղը, երևակայական պատկերները, մտքի անկաշկանդ թռիչքը, նրանց խաղի բնականոն տարրերն են: ՈՒսուցման մեթոդը /հունարեն metodos՝ ճանապարհ ինչ-որ տեղ, ինչ-որ բանի տանող/ մանկավարժի և սովորողի՝ ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն է: Խաղի համար ցանկալի է ընտրել հետաքրքիր տարբեր տեսակետներ պարունակող թեմաներ, հետևաբար դրան մասնակցողները պետք է ներկայացնեն տարբեր դերեր:

Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը	• Աշակերտներին ոգևորում ենք, որ կարդալու ընթացքում ստեղծեն սեփական մտապատկերները: • Աշակերտները մտովի ստեղծում են կարծիքների և գաղափարների վառ պատկերներ, որոնք նպաստում են ավելի երկար մտապահել տեղեկատվությունը:
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Վերապատրաստման ընթացքում «Առարկայի դասավանդման մեթոդիկա» ուսումնասիրելիս գաղափար ծնվեց ժամանակի մեքենայի միջոցով երեխաներին տեղափոխել պատմական կոնկրետ ժամանակաշրջան, նրանց տալ դերեր, որի շնորհիվ աշակերտները ավելի պատկերավոր կմտապահեն պատմական ժամանակաշրջանը:

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Արգիշտի Ա Մենուայի հաջորդի՝ Արգիշտի Ի-ի գահակալության տարիներին (մ. թ. ա. 786–764 թթ.) Վանի թագավորությունը հասել է հզորության գագաթնակետին: Տերությունը ձգվել է Ուրմիայի ավազանի հարավից մինչև Ջավախք, Սևանա լճի ավազանից և Կուր գետից մինչև անդրեփրատյան աջափնյա շրջաններ (ներառյալ Մելիտենե և Թաբալ երկրները), Մասիուս և Կորդվաց լեռներից մինչև Ճորոխի ավազան: Արգիշտի Ա-ի կառավարման տարիներին պատմության համար արժեքավոր աղբյուր են նրա անունով Հայկական լեռնաշխարհի զանազան վայրերում պահպանված սեպագիր արձանագրությունները (ավելի քան 30), մասնավորապես Վան քաղաքի միջնաբերդի Խորխոր կոչվող ժայռին փորագրված տարեգրությունը և նրա կրկնօրինակը: Խորխոռյան տարեգրությունը փորագրված է Վանի ժայռի հարավարևմտյան կոմում,որի ոչ լրիվ պահպանված մասերը գրված ութ սունյակով կազմում են 380 տող: Խորխորյան տարեգրության կրկնօրինակի Վանի Սուրբ Սահակ եկեղեցուց գտնված երկու հատվածները պարունակում են 138 տողեր, որոնք չեն պահպանվել ժայռի վրա: Ուստի

տարեգրության սկզբնական բնագիրը պետք էր անցներ 500 տողից:

Արգիշտու ութ արձանագրությունները որպես ժայռագրություններ (կամ քարագրություններ) առաջինն են իրենց տողերի քանակով ուրարտական արձանագրությունների մեջ: (Գ Ղ, Ուրատուի պատմություն, Երևան 1940,157)

Իր թագավորության սկզբնական տարիներին Արգիշտի Ա-ն զգալի ջանքեր է գործադրել ամրապնդելու իր հոր՝ Մենուայի հյուսիսային արշավանքները անդրարաքսյան երկրներում: Գահակալման սկզբում Արգիշտին ջանքեր է գործադրել Հայկական լեռնաշխարհի ցեղերին Ուրարտու պետության մեջ միավորելու համար: Արգիշտին նախ միավորել է դեռևս անկախ կյանքով ապրող Դիաուեխի (Տայք), Զաբախա (Զավախք), Կատարզա, Իգա կամ Իյա (Չըլդըր լճի հարավում) և Էթիունյան ցեղային միության լայնատարած տերիտորիան (Սարիղամիշից մինչև Սևանա լիճը): Այնուհետև նվաճում է Էրիախի երկիրը (Ծիրակ), իսկ Արաքսի վերին հոսանքում՝ Աբիլիանին (Աբեղյանք), Աբունին (Հավնունիք), Ուիտերուխին, Իրկուան կամ Էրիկուան (Մասյացոտն), Ուլուանի և Կիեխունի երկրները, հասնում մինչև Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը՝ Իշտիկունի և Լիկիու, Խաթե (Եփրատ գետից արևմուտք, Մալաթիա քաղաքի շրջան), Սևանի ավազանի ցեղերին: (ակադ,304) Այնուհետև ձեռնամուխ է եղել մերձուրմյան Մանա երկիրը Ուրարտուին միացնելուն: Ըստ Խորխորյան տարեգրության, Արգիշտիի հետագա արշավանքները հաջորդաբար կատարվել են

Ասորեստանի ազդեցության ներքո գտնվող Մանա, Պարսուա, Բուշտու և այլ երկրների դեմ: Ասորեստանի դեմ արշավանքներում Արգիշտին երբեմն հասել է մինչև Բաբելոն: Վճռական հարված հասցնելով Ասորեստանին՝ Արգիշտին տիրել է Հյուսիսային Ասորիքով և Ուրմիա լճի ավազանով անցնող առևտրական մայրուղիներին: Ասորեստանը իր առաջնակարգ դիրքը Առաջավոր Ասիայում հարկադրրաբար զիջել է Ուրարտու պետությանը, որը հասել է հզորության բարձրակետին: Գոռոզ Ասորեստանն անգամ թույլ էր Ուրարտուից: ((գղ,172)

Էրեբունի

Արգիշտի Ա-ն ունեցել է նաև եռանդուն շինարարական և տնտեսական գործունեություն: Արարատյան դաշտավայրի կամ ուրարտական «Ազա երկիր» փոխարքայության առաջին խոշոր ռազմա-ստրատեգիական ու քաղաքական կենտրոնը դարձավ ներկայիս Երևանի հարավ-արևմտյան մասում հիմնադրված մեծ քաղաքը՝ Արին բերդ բլրի կատարին վեր խոյացող հսկայական ամրոցով: 1952թվականի պեղումների ժամանակ, Արին բերդի փլատակների վերին շերտում հայտնաբերվեց 13 տողանոց սեպագիր արձանագրություն, որը փորագրված էր սրբատաշ բազալտի վրա՝Արգիշտի Ա թագավորի անունից: Այդ կարևոր վավերագիրը հավաստում էր, որ Արին բերդ բլրի վրա ու նրա շրջակայքում Մենուայի որդի Արգիշտի թագավորը, Խալդի ատծո զորությամբ, Էրեբունի անունով հոյակապ քաղաք կառուցեց, ի հզորություն Բիայնիլի երկրների և ի սարսափ թշնամու երկրների… Քաղաքական ընթերցումը

վերջնականապես ճշտվեց 1952-1953 թվականներին, երբ Կարմիր բլուրի պեղումներով հայտնաբերված բրոնզե դեկորատիվ վահանների նվիրատվական արձանագրություններից հայտնի դարձավ Էրեբունի ընթերցումը (նախապես ընթերցում էին Իրպունի, Իրբունի, Էրեբունի):

Բարեբախտաբար այս քաղաքի անունը և նրա հիմնադրման հետ կապված որոշ մանրամասներ պահպանվել էին Արգիշտի Ա թագավորի նշանավոր Խորխորյան տարեգրության այն հատվածում, որտեղ հիշատակվում են արևելյան այդ հզոր տիրակալի թագավորության հինգերորդ տարվա իրադարձությունները: Արդ, եթե Արգիշտի Ա-ի գահակալության առաջին տարին մ.թ.ա. 786 թվականն էր, իսկ Էրեբունին կառուցվել է այդ պահից չորս տարի անց, ապա Էրեբունի-Երևանի հիմնադրման տարեթիվը պետք է համարել մ.թ.ա. 782 թվականը:((ակադ, 354)

Նման խոշոր ձեռնարկության համար ավելի հարմար ժամանակ չկար, քան մ.թ.ա. 782-781 թվականը, որովհետև հաջորդ մի քանի տարիներին Արգիշտին արյունահեղ կռիվներ էր մղում Ասորեստանի դեմ, իսկ նախորդ տարիներին զբաղված էր արևմտյան և հարավ-արևմտյան արշավանքներով, որոնք տևեցին մինչև մ.թ.ա. 782 թվականը: Ահա այդ արշավանքների ժամանակ է, որ Արգիշտին գրավում է Խաթեն (խեթերի երկիր) և Ծուփանին (պատմական Ծոփք) ու այնտեղից գերված 6600 ռազմագերիների այժմյան Երևանի շրջանը տեղափոխելով, հիմնադրում է Էրեբունի քաղաքը: Շատ հնարավոր է, որ Խաթե և Ծուփանե երկրներից գերեվարված զինվորները

պատկանելիս լինեին նախահայկական ցեղերին և ժամանակի սովորության համաձայն, գերեվարվեին ամբողջ ընտանիքներով՝ կանանց, ծերերի, երեխաների հետ միասին: Այդ դեպքում անհրաժեշտ կլիներ գոնե կրկնապատկել կամ եռապատկել տարեգրության մեջ հիշատակվող գաղթականների թիվը և ենթադրել,որ ուրարտական ժամանակաշրջանի Արարատյան դաշտի բնակչության հայացումն սկսվել է Էրեբունիի հիմնադրմամբ, որ այստեղի բնակչությունը միատարր ու միալեզու չէր ի սկզբանե: Էրեբունիի հիմնական բնակչության մեջ մտնում էին թե՝ ուրարտական կայազորի ջոկատներ և թե՝Ազա երկրի տեղաբնիկ խավերը: Այսպիսով, նորաստեղծ Էրեբունի քղաքի բնակչության թիվը կարող էր հասնել մի քանի հազարի:

Էրեբունին ուրարտական խոշոր ռազմա՛ստրատեգիական հենակետ էր և իր հզոր զինվորական կայազորով կոչված էր ամրապնդելու երկրի դիրքերը հսյուսիսային սահմանների հատվածում, ռազմատենչ, հատկապես Ուդարի–Էտոփնի ցեղախմբերի ներխուժման վտանգը կանխելու համար: Մյուս կողմից Արարատյան հարթավայրը Էրեբունիի հետ մեկտեղ, Վանի շրջանից հետո, ուրարտական պետության երկրորդ խոշոր տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոնն էր: Էրեբունիի հիմնադրման ժամանակ Ուրարտուն, որպես պետություն, հասել էր տնտեսական, քաղաքական ու ռազմական հզորության և գերիշխում էր Առաջավոր Ասիայում:

Քաղաքաշինական առումով Էրեբունին, ինչպես և ուրարտական քաղաքների մեծ մասը, ունի պարզորոշ կառուցվածք: Որպես կանոն նրանք տարածվում էին բարձրադիր, անառիկ բլուրների շուրջը, որոնց գագաթին վեր էր խոյանում հզոր միջնաբերդը:

Ինչպես գրում է Նիկողայոս Ադոնցը ուրարտացիները մեգալիթիկ կառուցումների խոշոր վարպետներ էին: Մեզ հետաքրքրող վավերագրերում այս նյութի վերաբերյալ առկա տվյալները, հակառակ ճոռոմ ոճին, արժեքավոր են և իրականության համապատասխան: Ըստ այդ տվյալների՝ուրարտական քաղաքները «կառուցված էին լեռների վրա»: Տարօրինակ է թվում քաղաքները տեսնել լեռների վրա: Որոշ քաղաքներ «փայլում էին աստղերի նման, և 240 արմնկաչափ բարձրության վրա երևում էին նրանց հիմքերը»:

Արմնկաչափերի նշված քանակությունը անում է 120 մետր: Դա այնպիսի բարձրություն չէ, որ արժանի լինի «լեռ» կոչվելու: Մի երկրում, ուր լեռները հազարավոր մետրերով են դեպի երկինք խոյանում, 120 մետր բարձրությունը միայն բլուր է կազմում:Բացարձակապես ճիշտ է , որ Ուրարտուի բերդաքաղաքները բլուրների, բայց հատուկ տեսակի բլուրների կատարներին էին կառուցվում:

Որ Արգիշտին և նրան հաջորդող ուրարտական թագավորները իրոք մեծ նշանակություն էին տալիս Էրեբունի քաղաքին, երևում է բուն միջնաբերդում թողած 23 սեպագիր արձանագրություններից, որոնք մեզ պատմում են Էրեբունի հրաշալի շինությունների մասին

Այս բոլոր փաստերը գալիս են հավաստելու, որ Արգիշտի Ա-ի և նրա հաջորդների (Սարդուիր Բ, Ռուսա Գ) օրոք Էրեբունի-Երևանը Ուրարտուի առավել հզոր ռազմա-ստրատեգիական կենտրոններից մեկն էր իր բնակելի թաղամասերով ու դամբարանադաշտով, միջնաբերդի հոյակապ շինվածքներով և նրանց պերիստիլ բակով, բնակելի կացարաններով, արքայանիստ ու տոնական դահլիճներով, «սուսի» տաճարով, Խալդի աստծո և այլ տաճարային կոմպլեքսներով, տնտեսական ու պահեստային ընդարձակ կառույցներով: Ուրարտական ճարտարապետական հուշարձաններից համեմատաբար լավ են ուսումնասիրված Էրեբունի և Թեյշեբաինի քաղաքների միջնաբերդերը:

Քաղաքի կառույցները, որոնք փռված են բլուրի շուրջը, պեղված են մասնակի, իսկ միջնաբերդն՝ ամբողջությամբ: Էրեբունիի եռանկյունաձև հատակագծով միջնաբերդը կառուցվել է Արին–բերդ բլուրի գագաթին, ունեցել է հարմար ստրատեգիական դիրք և պաշտպանվել հզոր բերդապարիսպներով, որոնք մուտքից աջ, հարավ-արևելյան հատվածում կազմում են երեք շարք և վարպե– տորեն կապված են տեղանքի զառիթափ լանջին: Էրեբունիի եռանկյունաձև միջնաբերդը շրջապատված է եղել բազալտե հիմքի վրա հում աղյուսով շարված, 3 մետր լայնություն և մոտ 15-20 մետր բարձրություն ունեցող ատամնավոր հզորպարսպով: Բերդապարիսպների, ինչպես ե միջնաբերդի մյուս կառույցներում կիրառված է բազալտ, տուֆ, փայտ և հում աղյուս: Երբեմնի 10–12 մ բարձրությամբ պատերից

պահպանվել են 5–6 մ, որոնք հնարավորություն ընձեռեցին ստույգ և լիակատար ուրվագծել միջնաբերդի ընդհանուր հատակագիծը, վերականգնել նրա ծավալատարածական առանձին հատվածները, կառույցների նախնական ձեերը, որոշ մանրամասներ, ինչպես նաև որմնանկարները: Միջնաբերդն ունեցել է որոշակիորեն արտահայտված երեք հիմնական մասեր՝ պալատական, պաշտամունքային և տնտեսական: Էրեբունիի Արարատին և Արագածին նայող կողմերը միջնաբերդի պաշտոնական, հանդիսավոր մասն են: Այստեղ էին տեղավորված ընդարձակ պալատը, խալդի աստծո մեծ տաճարը, մոնումենտալ կառույցները: Այս կառույցները եզրափակում էին միջնաբերդի կենտրոնական մասում ընկած հրապարակը, պալատի հզոր պատերով ու տաճարի շքամուտքի փայտյա նրբագեղ սյունաշարի զուգորդումով: Միջնաբերդը, ուր զինվորական կայազորն էր, հարմարեցված էր երկարատե և հուսալի պաշտպանության: Այդ են վկայում հացահատիկի մեծ տարողության շտեմարանները, որոնք հայտնաբերվել են այստեղ: Միջնաբերդի կառույցներից ամենամեծը պալատն էր, որի շքամուտքի արձանագրությունն ասում է. «Խալդիի մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին այս հոյակապ պալատը կառուցեց»: Պալատն ուներ մի շարք խոշոր դահլիճներ, երկու բակ, որոնց շուրջը տեղավորված էին տարբեր նշանակության սենյակներ, իսկ թևերից մեկում գտնվում էր պալատական տաճարը «Սուսի» անվամբ: Տաճարի առաջ, բակի միջին մասում, զոհատունն էր: Պալատի ամենամեծ դահլիճը, որը երկայնական

առանցքով ուներ հինգ սյուն, նախատեսված էր ընդունելությունների և հանդիսավոր արարողությունների համար: Դահլիճի մոնումենտալ ձևերը լրացվել են ճոխ որմնանկարներով, որոնք պատկերում են աշխարհիկ և պաշտամունքային թեմաներ: Էրեբունի քաղաքի միջնաբերդի շինություններից մեկում հայտնաբերվել են բազմագույն նոր որմնանկարներ, որոնք հին-արևելյան արվեստի հրաշալիքներեն և իրենց աշխարհիկ բնույթով շատ բարձր մակարդակի վրա են կանգնած: Այս որմնանկարների մեջ հանդես են գալիս ուրարտական ռազմիկները՝ գույնզգույն հագուստներով, հանդերձանքի ու զինավառության հետաքրքիր մանրամասներով: Այստեղ թագավորական որսի շքեղ տեսարաններում ներկա են նև Բիայնիլի-Ուրարտուի ճաճանչափայլ թագավորը՝ մարտակառքի վրա, նետաձգության պատրաստ վիճակում, ինչպես և նրան շրջապատող տոհմիկները, հետևազորն ու այրուձին:Սրանք բոլորը որսի շներով հետապնդում են խուճապահար «հրեեն» նժույգների, վայրի ցուլերի, առյուծների և ընձառյուծների: (Հժպ 404) Այս հսկա «կտավի» ռեալիստորեն կատարված առանձին մանրամասները զարմանք են պատճառում իրենց բարձր վարպետությամբ և մրցում մեծ արվեստի գործերի հետ: Նման տեսարաններ են թփուտներում թաքնվող հորթուկի, կենդանուն պատառոտող կատաղի շների, սայլապանի կամ եզներին քշող երկրագործի պատկերները: Ուրարտական որի տեսարանները կրկնվում են

Էրեբունիի դամբարանադաշտում հայտնաբերված բրոնզե գոտիների վրա նույնը)
Արին-բերդի ավերված շինություններից մեկի պատերի սպիտակ ֆոնի վրա 1950 թվականի հետախուզական պեղումների ժամանակ հիմնականում կապույտ ու կարմիր ներկով արված հիանալի որմնազարդի հիանալի մնացորդներ են հայտնաբերվել: Պեղումները թույլ տվեցին վերականգնել նախշազարդային տարրերի հաջորդականությունը: Պատի վերին մասում՝ դուրս ցցված քիվի վրա, տեղադրված էին շրջանակները, որոնց մեջ ներգծված էին բազմաթև աստղեր: Դրանից ներքև անցնում են բնորոշ ասորեստանյան տիպի արմավազարդերի շարքը՝ կապույտ ու կարմիր գույների հաջորդականությամբ, իսկ դրա տակ աստիճանաձև փոքր աշտարակների շարքով լցված մի շերտ, որը նույնպես տարածված է ասորեստանյան որմնանախշերում: Նախշազարդ այս երեք շարքի տակ անցնում էր ցլիկների ու խոյերի պատկերներով նկարազարդված ոչ լայն ֆրիզը, իսկ ավելի ներքև՝ սրբազան ծառերն ու նրանց կողքին կանգնած աստվածներին պատկերող նկարներ: Ծառերն իրենց ձևով մոտ են Արգիշտիի ու Սարդուրիի սաղավարտների վրա պատկերված ծառերին, սակայն ավելի սխեմատիկ են. Կապույտ ներկով արված են արտաքին ուրվագիծը, բունը և խոշոր պտուղներով վերջավորված ճյուղերը: Աստվածների կերպարանքները ևս հիշեցնում են սաղավարտների վրայի պատկերները. Նրանք անմորուս են ու անթև, ձեռքերին ունեն մի-մի պտուղ և զամբյուղ: Այդ գոտուց ներքև

տեղավորված էին աստվածների ավելի խոշոր պատկերներ(օրինակ 1952 թվականին հայտնաբերված՝ առյուծի վրա կանգնած աստծու պատկերը):

Մ.թ.ա. 7-րդ դարում ուրարտական Ռուսա թագավորը կառուցում է Թեյշեբաինին և Էրեբունիից այնտեղ տեղափոխում արվեստի ու արհեստագործության շատ երևելի իրեր ու առարկաներ՝ նոր ամրոցն ու տաճարային շինությունները կահավորելու, զարդարելու համար:Հնարավոր է, որ Ռուսայի այս ձեռնարկումների կապակցությամբ Էրեբունին կորցրած լիներ իր վաղեմի առաջնակարգ նշանակությունը, սակայն պակաս հավանական չէր լինի ենթադրել, որ Էրեբունիի կողքին վեր խոյացող այդ նոր կոմպլեքսը հենց նրա հավելումը լիներ: Իբրև կրոնական, սրբազան քաղաքամաս, այն կրում էր ուրարտական գերագույն աստվածներից մեկի անունը, ընդգրկում էր տաճարային երկու կոմպլեքս և ուներ նրանց ենթակա քաղաքային կառույցներ ու տնտեսություններ:

Մ. թ. ա. VI դ. Ուրարտուն, Մարաստանի հարվածների տակ, հեռացավ պատմության թատերաբեմից՝ տեղը զիջելով կազմավորվող հայ ժողովրդին: Սակայն իրանական էքսպանսիան իր մեծապետական ձգտումներով արմատապես հեղաշրջեց երկրի պատմական ճակատագիրը: Էրեբունին այդ շրջանում, ինչպես և նվաճված մյուս երկրների մի շարք քաղաքներ դարձան աքեմենյան Իրանի սատրապության կենտրոններից մեկը: Այս է պատճառը, որ

Էրեբունիում հայտնաբերվել են Աքեմենյանների շինարարական գործունեության հետքեր, ուրարտական շենքերի հետագա կառուցապատ– ման, ինչպես և նրանց վերակառուցման միջոցով: Այդ վերակառուցումների ընթացքում տեղի է ունեցել ուրարտական շենքերի ներքին տարածական հորինվածքների թեմատիկ բովանդակության փոփոխություն: Այդպիսով, Էում վերակառուցվել է Խալդիի տաճարը, որի 12-սյունանոց արտաքին սյունասրահին կցվել է 18-սյունանոց սրահ, և ստեղծվել աքեմենյան 30-սյունանոց դահլիճ՝ «ապաղան» կառույցը, որը, ինչպես և Իրանում, ծառայել է պաշտոնական ընդունելությունների, հանդիսավոր արարողությունների և հանդեսների համար: Էրեբունիում Աքեմենյանների մյուս կառույցները պաշտամունքային շենքերն են՝ կրակի մեծ ու փոքր տաճարները: Կրակի մեծ տաճարը դտեղծվել է պալատի պերիստիլ բակի և «Աուսիի» տաճարի վերակառուցման հիման վրա: Աքեմենյանները ոչ թե սոսկ հարմարվել են գոյություն ունեցող կառույցներին, այլ դրանք հիմնովին վերափոխել են՝ ստեղծելով թեմատիկ նոր մտահղացմամբ ճարտարապետական շենքեր: Այսպես, օրինակ, այնտեղ, ուր պաշտվում էր ուրարտական Իուբշա աստվածը, նրան փոխարինել է Ահուրամազդան: Կրակի մյուս տաճարը նոր կառուցված շենք է՝ բաղկացած երեք սենյակից: Մեծ սենյակի կամ դահլիճի ներսում հայտնա– բերվել են երեք որմնախորշեր՝ իրենց նստարաններով: Ինչպես որմնախորշե– րը, այնպես էլ բոլոր դռները ավարտվում էին երկկենտրոն կամարներով, որոնք

	այդ հորինվածքի ամենահին օրինակներն են Հայաստանում: Էրեբունիում հայտնաբերված աքեմենյան կառույցները համապատասխանում են Իրանի դասական ճարտարապետության ձևերին, իսկ այդ նույն շենքերի շինարարական տեխնիկան գալիս է տեղական ավանդույթներից: Այսպիսով Էրեբունին Հին Արևելքի այն եզակի քաղաքներից է, որտեղ հանդիպելով հանգուցվում են երկու հինավուրց մշակույթներ՝ ուրարտական և աքեմենյան–իրանական: Մյուս կողմից Էրեբունիի կառույցները հայական դասական ճարտարապետության կարեվոր ու հիմնական ելակետ են հանդիսացել: Էրեբունիի հնագիտական հետազոտությունները պարզորոշ ցույց տվեցին, որ նրանում կյանքը շարունակվել է նաև հետագա դարերում, ընդհուպ մինչև ժամանակակից Երևանը, նույն անվամբ, միայն դարերի ընթացքում փոխակերպված ձևով Էրեբունի, Երևու, Երևան:
Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	սովորել սովորելու կարողունակություն
Օգտագործված մեթոդները, գործիքները	Վերը նշված նյութը նախօրոք տրամադրվել է աշակերտներին, բաշխվել է դերեր (օրինակ՝ Արգիշտի Ի, որպես նվաճող և Արգիշտի Ի, որպես շինարար): Աշակերտները «Խաղ ճանապարհորդություն» մեթոդի միջոցով_ժամանակի մեքենայի օգնությանբ մտովի հայտնվել են Վանի թագավորության ժամանակաշրջանում և պատկերավոր, առաջին դեմքով ներկայացրել են իրենց կատարած աշխատանքները: Նվաճող Արգիշտի Ի-ը քարտեզի վրա ներկայացրել է իր նվաճումները: Շինարար Արգիշտի Ի-ը պատմել է իր կառուցած

	ամրոցների, քաղաքների և դրանց պաշտպանական կառույցների մասին:
Իրականացման ժամանակահատվածը	Դասը վարել եմ 2022 թվականի սեպտեմբերի 22-ին 10.09-21.09
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Դասը տեղի է ունեցել Պտղնիի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում, որտեղ սովորում են մեկ տղա և մեկ աղջիկ:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Այսպիսով դասի արդյունքում հանգեցի այն եզրակացության, որ «Խաղ ճանապարհորդություն» մեթոդը բավականին արդյունավետ է, քանի որ երեխաների մոտ նկատեցի մեծ ոգևորություն, երևակայական պայծառ ու պատկերավոր միտք: Աշակերտները խոստովանեցին, որ նման մեթոդի կիրառումը բարձրացրեց նրանց տրամադրությունը, իրենց մտովի պատկերացնելով Վանի թագավորության ժամանակաշրջանում, ինչպես նաև գիտելիքի արդյունավետության առումով բավականին գոհացնող էր, քանի որ իմ առջև դրված նպատակը ամբողջությանբ կատարված էր: Սակայն պետք է նշել, որ խաղի արդյունավետությունը պայմանավորված է նրա կենսականությանբ և նոր ապրումներով: Դա նշանակում է որ մեթոդը պետք է կիրառել զգույշ: Եթե խաղեր անցկացվեն յուրաքանչյուր պատեհ-անպատեհ առիթներով, դրանք կարժեզրկվեն: Խմբի փոքրաթիվ լինելը նպաստում է հանգիստ, ոչ ֆորմալ միջավայրի ստեղծմանը:
Այլ տեղեկատվություն	Մոտակա ժամանակահատվածում պլանավորել եմ էքսկուսիա դեպի Էրեբունի-Երևան թանգարան, որտեղ էլ ավելի կամրապնդվի աշակերտների գիտելիքները Վանի թագավորության և Արգիշտի Ի-ի մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ակադեմիական, Հայոց պատմություն, Երևան 1965թ.
2. Կառուցողական մեթոդների և ռազմավարությունների շտեմարան, Երևան, 2022թ.
3. Հայ ժողովրդի պատմություն, Ժամկոչյան, Երևան, 1975թ.
4. Մասնագիտական զարգացման ձեռնարկ, ուսուցիչների համար, Երևան, 2004թ.
5. ՈՒսումնամեթոդական ձեռնարկ, Մեթոդի կիրառումը դասի ընթացքում, Երևան, 2022թ.
6. ՈՒրարտուի պատմություն, Երևան, 1940թ.
7. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A3%D5%AB%D5%B7%D5%BF%D5%AB_%D4%B1

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ